

Գալուստ վարդապետներուն: Կթղ. ամենայն Հայոց (1885 — * 1891). Իր կենսագրութիւնը տեսնել (Արարտ. 1891, էջ Ա.—Է):

ՄԱԿԱՐ (մհս.) ԿԱՄԱՐԱԿԱՊՅԻ. — Սեղանաւոր. 1720ին Մարզուանցի Գրիգորի տպարանէն հրատարակուած Յայտնառոյթի յիշատակարանին մէջ կը յիշուի թէ Մակար Կամարակապցի Ս. Յակոբի վանքին թողած է բազմաթիւ յիշատակներ. այդ պատճառաւ Մարզուանցին կուտայ անոր յիշատակաւոր տիտղոսը (ՄՁ. Թ. 532). մեծապէս սատարած է նաեւ Մարզուանցիին տպարանին: Մակար և իր եղբայրները շինել տուած են Ս. Գլխազրի մատրան հարաւային զրան սատարեայ փեղկերն, ինչպէս յայտնի է հետեւեալ յիշատակարանէն. «Գեղեցիկ դուռն շինեցաւ ի պատրիարքութեան Տեառն Գրիգորի և Տեառն Յովնաննէս վարդապետացն՝ վասն Գլխազրի Սրբոյն Յակոբայ. և է յիշատակ կամարակապցի նազարի որդւոյն օրհնեալ Մահտեսեաց Մակարին, Առաքելին, Մարտիրոսին և Յարութիւնի և ծնողացըն և ամենայն զարմից նոցա ընթերցողքդ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ի թուին ՌՃՁ (=1731), շինեցաւ ի Յակոբ ծառայի:» Մակարի նուէրն է նաև ՄՁ. Թ. 949 ձեռագիրը:

ՄԱԿԱՐ ՀԱՅԿԱՋՆ, ՊՏՐՔ. ԱՆՏԻՈՒԲԻ. — Որդի Միքայէլի և Մարիամու: Մակարի ծնողքն Հայաստանէն կը գաղթեն և կը հաստատուին Անտիոքի մէջ. ուր ան կը ծնի 970ին. տեղւոյն Մակար հայրապետէն կը մկրտուի և կ'որդեգրուի: Բաց ի հայերէնէ, կ'ուսանի նաև յունարէն և ասորերէն լեզուները. և ապա կը յաջորդէ Մակար հայրապետին: Իրեն հետ ունենալով Յովնաննէս, Պետրոս, Դաւիթ և Կոստանդին անուն ազգակիցները՝ ուխտի կուգայ Երուսաղէմ և կ'այցելէ Ս. Տեղիքը և Ս. Յակոբի վանքը: Դաւանական խնդիրներու պատճառաւ շատ նեղութիւններ կը կրէ Երուսաղէմի մէջ, և 1011ին կը մեկնի Գանտովա քաղաքը (Ֆէլէմէնկ), և 1012ին Ս. Բաւոնի վանքին մէջ կը հաստատուի: Ժանտախտէն կը վախճանի 1067ին (Չաւէ. Բ. 859—860):

ՄԱՂԱՔԻԱ ԴԵՐՁԱՆՅԻ. — 1516ին Ս. Յակոբի վանքին մէջ յօրինած է Բան գովեսից ի վարժապետ իւր Գրիգոր վրդ. Մշեցի ի րդ. ՋԿԸ. (= 1519) (ՄՁ. Թ. 1455):

ՄԱՂԱՔԻԱ ԵՊՍ. ՏԵՐՈՒՆԵԱՆ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՅԻ. — Մք. Ծ. 1846ին. աշկ. Ժառ. վարժ. ի 1866ին. Ձու. 1871ին. Տեսուչ